ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4509-Ա « 05 » նոյեմբերի 2025թ.

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՌԱԴԻՇՉԵՎԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.12 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Լաուրիկ Վարդանյանի և Համեստ Վարդանյանի լ/ա Արտյոմ Հարությունյանի դիմումը՝ Քանաքեռ-Զեյթուն, Ռադիշչևի 2-րդ փողոց հ.12 հասցեում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Լաուրիկ Վարդանյանին և Համեստ Վարդանյանին պատկանող գույքի մի հատվածի (հ.2 օժանդակ շինության՝ 9.6քմ) գործառական նշանակությունը փոխելու մասին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.09072025-01-0218 վկայական):

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի հ.88 որոշման հ.1 հավելվածի 7-րդ կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-79240-25 եզրակացությունը.

1.Քանաքեռ-Զեյթուն, Ռադիշչևի 2-րդ փողոց հ.12 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Լաուրիկ Վարդանյանին և Համեստ Վարդանյանին, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 9.6քմ մակերեսով օժանդակ շինության /կադաստրային ծածկագիր՝ 01-012-0228-0072-002/ գործառական նշանակությունն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, սահմանել հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես հասարակական /«ՀՀՇՆ 30.01.2023» պահանջներին չհակասելու պայմանով/:

2. Հանձնարարել Քանաքաեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված 9.6քմ մակերեսով օժանդակ շինությունը հաշվառել որպես հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ սահմանված գույքի գործառական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

5. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի ու Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246